



89

# ՅԱԿՈՎՈՅԻ

ԱՐՁԱԿ ԵՒ ԶԱՓԱՌՈՅ ԲԱՆԻՑ

Ի ԳԵՏՈ ՎԱՐԺԱՐԱՅԱՑ

ԱՐՁԱԿ  
Ի ԿՈՐՈՒԵՑ ԿՈՍՈՂԵԱՀՅՑ

ԵՐՁԱԿ ԱՐՁԱԿԻՆ

Մանե արմատով է ծառ,  
Տունն հիմար է տուն:

ԽԱՐ-ԶԱՐ-ՀԱՐ

Տպարան Ա. Ավելյանիկիչ վաճիք

1909

33434

8 16  
3 57  
4 92

Jefferson January 2

1919 p.m. Friday 17.

Very凉爽

Phys. Preparation necessary

Fishing

No 2. Sarah working & Sam  
spare time & work

Հոգհանք

Պէտք և բարձ - ի զետք պէտք  
 Առև և բայ - ց պէտք - ի պէտք  
 Կարմարքած պէտք - ո ի պէտք - կ պէտք

334324

## ԾԱՂԿԱՔԱՂ

ԱՐՁԱԿ ԵՒ ԶԱՓԱԾՈՅ ԲԱՆԻՑ

Ի ՊԵՏՍ ՎԱՐԺԱՐԱՆԱՅ

ԱՐԱՐԵԱԼ  
Ի ԿԱՐԱՊԵՏԵ ԿՈՍՏԱՆԵԱՆՑ

ՇՐՋԱՆ ԱՌԱՋԻՆ

Ծառն արմատով է ծառ.  
Տունն ճիմամբ է տուն.



## Ա. ԳԱՐՈՒՆ

Զմեռն էանց. անձրևք անցին և գնացեալ մեկնեցան.  
ծաղիկք երևեցան յերկրի. ժամանակ յատանելոյ եհաս. ձայն  
տատրակի լսելի եղեւ յերկրի մերում. թզենի ընձիւղեաց  
զբողբոջ իւր. արգեք մեր ծաղկեցան և ետուն գհոտս իւրեանց:

## Բ. ՇԱՀԻԴՔ ԱՄԲԱՐՇՏԱՑ


Որդեակ, մի խափեցեն քեզ արք ամբարիշտք: Եթէ  
կոչեսցեն զքեզ և ասիցեն. Եկ ընդ մեզ. ծածկեսցուք յերկ-  
րի զայր արդար. բարձցուք զիշատակ նորա յերկրէ. և զստա-  
ցուածս նորա զպէսպէսս ըմբռնեսցուք. լցցուք զտունս մեր  
աւարաւ: Որդեակ, մի երթար ճանապարհ ընդ նոսա, զի ոտք  
նոցա ի չարիս ընթանան:

## Գ. ՄՇԱԿՔ ԱՅՖԻՈՅՑ

Ոլր մի էր տանուտէր, որ տնկեաց ազգի. և ցանկով  
պտտեաց զնո. և փորեաց ի նմա հնձան. և շինեաց աշտա-  
րակ. և ետ զնո ցաշակս. և գնաց ի տար աշխարհ: Իբրև  
մերձեցաւ ժամանակ պտղոյ, առաքեաց զծառալս իւր առ  
մշակսն՝ առնուլ զպտուզս նորա: Եւ կալեալ մշակացն զծա-  
ռալս նորա, զոմն տանջեցին, զոմն սպանին, զոմն քարկո-  
ծեցին: Դարձեալ առաքեաց այլ ծառալս բազումս քան զա-  
ռաջինսն, և արարին նոցանոյնպէս: Յետոյ առաքեաց առ  
նոսա զորդի իւր և ասէ. մթերէս ամաչեսցեն յորդւոյ աստի  
իմմէ: Դակ մշակքն իբրև տեսին զորդին, ասեն ընդ միտս.  
Սա է ժառանգն. եկալք, սպանցուք զսա, զի մեր լինիցի  
ժառանգութիւնն: Եւ հանին զնա արտաքս քան զալիքն և  
սպանին:

## Դ. ԵՐԳ ԴԱՇՏԱՑ

Զինչ չաղցը մեզ շինականաց,  
Բայց նուազել զերգս դաշտաց,  
Զարօտ լերանց, զաղբիւր վճիտ,  
Ըզհովանիս անտառախիտ:



Ե. ՈՐՍՈՐԴ

Որսորդն կալաւ կաքաւ մի. և կամէր զենուլ. և ասէ կաքաւն. Մի սպանաներ զիս. զի ես խաբեցից զբազում կաքաւս և ածից յակնատս քո:

Այս ասէ որսորդն այժմ ստուգիւ մեռցիս ի ձեռաց իմոց. զի զսիրելիս և զազդականս քո մատնես ի մահ:

Զ. ՊԱՏՈՒԻՐԱՆՔ ՏԵՍՈՒՆ

Մի յօժարեսցիս ընդ բազումս ի չարիս. Մի հաւանեսցիս ընդ անիրաւի լինել վկայ անիրաւ: Յամենայն ի զուրբանէ ի բաց լինիցիս. և զարդարն և զանպարտն մի սպանանիցես. և զամբարիշտն մի ապրեցուցանիցես վասն կաշառաց:

Է. ԵՐԱԶ

Տեսանէի ծուռ մի ի մէջ երկրի. և բարձրութիւն նորա մինչեւ յերկինս. և լայնութիւն նորա ի ծագս ամենալն երկրի. տերեւ նորա գեղեցիկ. և պտուղ նորա բազում. ի ներքոյ նորա բնակեալ էին դազանք վայրի. և լոստս նորա հանգուցեալ էին թռչունք երկնից: Տեսանէի և ահա զուարթուն իջանէր յերկնից և ասէր. Հատէք զծառդ և քշտեցէք զոստս դորա. թօժափեցէք զտերեւ դորա. և զպտուղ դորա ցըուեցէք:

Ը. ՏՐՏՈՒՆԶ

Եղեւ երբեմն տրտունջ անդէոց, թէ վասն ծննդոց մեր աշխատիմք. և ստեամբք ժողովեմք կաթն, և մարդիկ ճըմլեալ զպտիունս՝ առնուն ի մէնջ զվաստակս մեր. ելցնէք և այլ մի դարձուք առ նոստ: Եւ մի ոմն ի նոցանէ իմաստուն ասէ. Ոչ է այդպէս. զի զաւելորդսն քան զպէտս ծնընդոց մերոց առնուն մարդիկ. և խնամեն մարդիկ զմեզ և զծնունդս մեր. զի առնումք շատ քան թէ տամբք

Թ. ԻՄԱՍՈՒԹԻՒՆ.

Երանեալ է այլ, որ եգիտ զիմաստութիւն. զի լաւ է զվաճառն զայն գտանել քան զգանձս ոսկոյ և արծաթոյ. պատուականագոյն է քան զականս պատուականս. տմենայն ինչ պատուական չարժէ զնա. զի երկալն աւուրք և տմբ կենաց ի յաջմէ իւրմէ, և յահեկէ իւրմէ՝ փառք և մեծութիւն. ի բերանոյ նորա բզիսի արդարութիւն. զօրէնս և զորմութիւն ի լեզուի իւրում կրէ:

Ժ. ՓԱՐԻՍԵՑԻՆ ԵՒ ՄԱՅՍԱՒՈՐՆ

Ալք երկու ելին ի տաճարն կալ յազօթս, մին փարիսեցի և միւսն մաքսաւոր: Փարիսեցին կայր մեկուսի և զայս առանձին ազօթս մատուցանէր. Աստուած իմ, գոհանամ զքէն. զի ոչ եմ իբրև զայլս ի մարդկանէ, զյափշտակողս և և զանիրաւս և զշունս կամ իբրև զայս մաքսաւոր. այլ պահէմ երկիցս ի շաբաթու և տամ տասանորդս յամենայն ստացուածոց իմոց: Եւ մաքսաւորն կայր մեկուսի և ոչ կամէր զաշոն ընդ երկինս ամբառնալ. այլ կոծէր զկուրծս իւր և ասէր. Աստուած, քաւեա զիս զմեզաւորս: Ասեմ ձեզ. էջ սա արդարացեալ ի տուն իւր քան զնա, զի զամենայն՝ որ բարձրացուցանէ զանձն իւր, խոնարհեցի. և որ խոնարհեցուցանէ զանձն, բարձրասցի:

ԺԱ. ԽՐԱՅ

Լուր, որդեակ, խրատու հօր քո. դարձն զոտն քո ի ճանապարհէ չարէ. իմոյ իմաստութեան անսա՛ և իմոց բանից մատն զունկն քո. զի մի զզանալցես յետոյ և տափես թէ զիարդ ատեցի զիրատ, ոչ լսէի ձայնի խրատուի իմոյ և ուսուցչի իմոյ ոչ դնէի զունկն իմ:

ԺԲ. ԳԱՐԱԿ

Լուծան կետոց սառնամանիք,  
Պճնի երկիր դալարագեղ,

Ենչէ զեփիւռ արդ քաղցրասիք,  
Սլրդ արձակեն հաւք զգեղգեղ:  
Լէր գու, մանուկ, գործօն և ժիր,  
Տես իրը ի գործ ճեպի մեղուակ.  
Համեստութիւն, դստրիկդ, ուսիր,  
Մինչ ժողովես զմանիշակ:

ԺԴ. ՍԱՄԱՐԱՑԻՆ ՈՂՈՐՄԱԾ

Ոլր մի իջանէր յերուսաղէմէ յերիքով. և անկառ ի ձեռս  
աւագակաց, որք մերկացուցին զնա և վէրս եղին, թողին  
կիսամահ և գնացին: Դէա եղիւ քահանացի միոջ իջանել ընդ  
նոյն ճանապարհ. և տեսեալ զնա՝ զանց արար: Նոյնպէս և  
Վետացի մի եկեալ ընդ նոյն տեղի՝ ետես և զանց արար:  
Աւմարացի ոմն ճանապարհօրդեալ՝ եկն ընդ նոյն առ նովառ.  
և տեսեալ զնա զժացաւ. և մատուցեալ՝ պատեաց զվէրս  
նորա, տրկեալ ի վերայ ձէթ և գինի. և եղեալ ի վերայ  
գրաստու իւրոյ՝ ոծ զնա ի պանդոկի մի և զարմանեաց զնա:  
Եւ ի վաղիւ անդը՝ իբրև ելանէր անտի, հանեալ ետ ցպան-  
զոկապետն երկուս դահեկանս և ասէ. Պարման տար դմա.  
և զոր ինչ ծախիցես ի զա, ի միւսանգամ գալստեան իմում  
հատուցից քեզ:

ԺԴ. ՈՂՈՐՄԱԾՈՒԹԻՒՆ,

Մի յապաղեր բարի առնել կարօտելոյն: Յորժամ ձե-  
սընհաս իցես օգնել նմա, մի ասիցես թէ երթ և եկեսջիր  
և վաղիւ տաց: Քանզի ոչ գիտես զինչ վաղիւն ծնանիցի  
քեզ: Մի նիւթեր բարեկամի քում չարիս, որ յեցեալ և յու-  
ստցեալ իցէ ի քեզ:

ԺԵ. ՈՐՈՉ ԱՂԲԱՑԻՆ

Արք երկու էին ի քաղաքի միում, մինն մեծատուն և  
միւսն աղքատ: Եւ մեծատանն էին հօտք և անդեալք բա-

զում յոյժ: Եւ աղքատին և ոչինչ, բայց որոջ մի փոքր: Եւ  
որոջն հաստատեալ էր ընդ որդիս նորա ի միասին. ի հացէ  
նորա ուտէր. և ի բաժակէ նորա ըմպէր. և ի ծոց նորա  
ննջէր. և էր նորա իբրև զդուստր: Եւ եկն անցաւորն առ  
այրն մեծատուն. և խնալեաց մեծատունն առնուլ ի հօտից  
իւրոց և յանդէոց իւրոց. և էառ զորոջ աղքատին և արար  
առնն եկելոյ կերակուր:

ԺԴ. Ա. Դ. Ք Ա. Տ Ն

Աղքատն ի տօթոյ տապանալ. ի ցըտոյ դողալ. որովայնն  
սին և մարմինն մերկանգամ. յերքն թաղկեալք, գէմքն  
գեղնեալ և թոշումեալ. և ամենայն մարմինքն գգուտղեալք  
և երիթացեալք. թառամի, վարանի և ի գուբս երերեալ և  
գագարեալ կառանչէ. և խանդաղատելի ողորմուկս արկանէ.  
և սուզ ինչ կերակուր բազում աշխատութեամբ գտանէ. և  
երկիւղիւ ի գրանս, երկիւղիւ ի գաւիթս, երկիւղիւ ի տուն-  
ողն մտանէ: Ի տունսն յանտոնցն երկնչի. զի ձիքն կիցք  
հանեն, եղինքն եղջիւր ածեն, շունքն վիրաւորեն և մարգք  
չարք և անողորմք բամբասեն և թշնամանեն:

ԺԵ. ՊԱՏԳԱԾՄՔ ԱՍՏՈՒԾԱՅԻՆ

Խնդրեցէք և տացի ձեզ. հայեցէք և գտջիք. բախե-  
ցէք և բացցի ձեզ: Տուք փոխ ուստի ոչ ակն ունիցիք տո-  
նուլ: Զամենալին զալքի և զորք մի չարչարիցէք: Դիւրին է  
մալխոյ լնդ ծակ ասղան անցանել քան մեծատան յարքա-  
լութիւն Սատուծոյ մտանել:

ԺԵ. ԹՋԵՆԻՆ ԱՆՊՏՈՒԴ

Թգենի մի էր ուրումն տնկեալ յալգւոջ իւրում. և եկն  
խնդրել պտուղ ի նմա և ոչ եգիտ. ասէ ցալգեգործն. Ահա  
երեք ամք են, յորմէ հետէ գամ խնդրել պտուղ ի թգեն-  
ոջդ և ոչ գտանեմ. արդ կտրեալ զգա. ընդէր և զերկիրդ

Խափանէ: Նա պատասխանի ետ և ասէ. Տէր, թո՞ղ զդա այս  
ամ ես, մինչև շուրջ զդովաւ բըեցից և արկից աղբ. թե-  
րևս արասցէ պտուղ. ապա թէ ոչ յամէ ևս հատցես զդա:

ԺԹ. ԶԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Երթ առ մըջիւնն և նախանձեաց ընդ ճանապարհս  
նորա. լեր իմաստնագոյն ևս քան զնա. զի նորա ոչ գոյ  
երկրագործութիւն և ոչ հարկադիր. և պատրաստէ յամա-  
րայնոց զկերակուր և բազում համբարս դնէ: Մինչև լերք  
անկետալ կաս, ով վատ, կամ երբ ի քնոյ զարթիցես: Փոքր  
մի ննջիցես, փոքր մի նստիցիս, փոքր մի նիրհեացես, փոքր  
մի հանգուցանիցես զձեռս քո ի վերայ լանջաց քոց, ապա  
այնուհետև հասանիցի քեզ իբրև չար ճանապարհորդ աղ-  
քատութիւն, և կարօտութիւն իբրև զժիր սուրհանդակ: Ապա  
եթէ անդանդաղ լինիցիս, եկեսցէ իբրև զաղբիւր ամառն  
քո, և կարօտութիւն իբրև զալիր մի չար ինքնահալած լինիցի:

Ի. Ա. Ռ Մ Ե Ղ Ո Ւ

Թէ քաղցը ասես, մեղնուդ գործօն,  
Զիմ երեկեան մարդ ազազուն,  
Արդ փունջ առատ կապեմ զարդիս,  
Արածել անդ երբ և համիս:

Մինչեռ աջող է եղանակ,  
Մեզր ամբարեա ի քոյդ փեթակ.  
Ոչ միշտ գարուն, ոչ միշտ աշուն,  
Զմեռն գալ քեզ սառնատուն:

Գործեա, մեղնու, դու ինձ անհատ,  
Ի մեղրի մոմ բըձիմ առատ.  
Զի ի Սաղիմ յորթամ երթալց,  
Ի սուրբ տաճար նուէր տարալց:

Ի Ա. Ա. Ն Ծ Ե Ղ

Սովորաբար անծեղ յանտառս միշտ աղաղակէ, մանա-  
ւանդ ի տեսանել զոք ի կենդանեաց: Եւ ի հարցանել ձա-  
գոյն ասէ. «Զի թշնամիք միշտ արթուն զիս տեսցեն, և մի  
յորս ինչ մտաբերիցեն:

ԻԲ. ՊԱՏԱՐԱԳՆ ԱԲՐԱՀԱՄՈՒ

1. Փորձեաց Աստուած զԱբրահամ և ասէ ցնա. Աբրա-  
համ, Աբրահամ. և նա ասէ. Աւասիկ եմ: Եւ ասէ ցնա. Ա՛ռ  
դու զորդիդ քո սիրելի, զոր սիրեցեր զԲսահակ, և գնա զու  
յերկիր բարձր. և հանցես զդա տնդ յողջակէզ ի վերայ միոյ  
լերանց, յորոց ասացից քեզ:

2. Եւ յարեաւ Աբրահամ ընդ առաւօտն. համետեաց  
զէշ իւր. և առ ընդ իւր երկուս ծառալս և զԲսահակ զորդի  
իւր. և պատառեաց փայտ յողջակէզ. և յարեաւ զնաց: Եւ  
եկն ի տեղին, զոր ասաց նմա Աստուած. և յաւուրն երրոր-  
դի համբարձ Աբրահամ զաչս իւր և ետես զտեղին ի հե-  
ռաստանէ: Եւ ասէ Աբրահամ ցպատանիս իւր. Նստարուք  
դուք ալզը հանգերձ իշովդ. և ես և պատառեակդ երթի-  
ցուք մինչև ցանդը և երկիրապացուք և դարձցուք առ ձեզ:

3. Եւ առ Աբրահամ զփայտ ողջակիզին. և եդ ի վերայ  
Իսահակալ որդւոյ իւրոյ. և առ ի ձեռն զսուրն և զհուրն.  
և գնացին երկոքեան ի միտասին: Եւ ասէ Իսահակ յԱբրա-  
համ հայր իւր. Հայր. և նա ասէ. Զի է, որդեակ. և նա  
ասէ. Ա.Հ. Հուր և ահա փայտ. ուր է ոչխար յողջակէզ. և  
նա ասէ. Աստուած տեսցէ իւր ոչխար յողջակէզ, որդեակ:  
Գնացին երկոքեան ի միտասին. և եկին ի տեղին, զոր ասաց  
նմա Աստուած: Անդ շինեաց սեղան Աբրահամ. և եդ ի վե-  
րայ զփայտն. և կապեաց զԲսահակ զորդի իւր. և եդ զնա  
ի սեղան ի վերայ փայտին. և ձգեաց Աբրահամ զձեռն առ-  
նուլ զսուրն և զենուլ զորդի իւր:

4. Եւ կոչեաց զնա հրեշտակ Տեառն յերկնից և ասէ.  
Աբրահամ, Աբրահամ. և նա ասէ ցնա. Աւասիկ եմ. և ասէ.

Ճ  
Թ  
Ճ  
Թ  
Յ

Մի միեր զձեռն քո ի պատանեակդ և մի ինչ առներ դմա.  
զի այժմ գիտացի, թէ երկիւղած ես դու յԱստուծոյ և ոչ  
խնայեցեր լորդիդ քո սիրելի վասն իմ: Համբարձ Աբրահամ  
զաշ իւր և ետես և ահա խոյ մի կախեալ կալը զծառոյն  
Սալեկայ զեղջերաց: Եւ գնաց Աբրահամ, առ զիսոյն և եհան  
զնա յողջակէզ փոխանակ Իսահակայ որդւոյ էւրոյ:

Ի Գ. Բ Ա. Ն Ք Փ Բ Կ Զ Ի Յ

Սիրեցէք զթշնամիս ձեր, բարի արարէք ատելեաց ձե-  
րսց. օրհնեցէք զանիծիչս ձեր. աղօժմ արարէք, ի վերայ  
նեղաց ձերոց: Որպէս կամիք թէ արացեն ձեզ մարդիկ,  
այնպէս արասցիք և դուք նոցա: Նովին չափով, որով չափէք,  
չափեացի ձեզ: Հան նախ զգերանդ յականէ քումմէ և ապա  
հալեսջիր հանել զշիւղ յականէ եղբօր քո: Զիք ինչ ծածուկ,  
որ ոչ յալտ լիցի. և գաղտնի, որ ոչ ծանիցի: Ծառ ի պտղոյ  
իւրմէ ճանաչի: Զէ մարդարէ ընդունելի ի քաղաքի իւրում:  
Ոչ է աշակերտ լաւ քան զվարդապետ իւր: Ոչ ի փշոց քա-  
ղեն թուզ և ոչ ի մորենւոյ կթեն խաղող: Ի յաւելուածոյ  
սրտին խօսի բերան, Ուր գանձն ձեր է, անդ և սիրտք ձեր  
եղիցին:

Ի Դ. Ա. Ա. Ե Շ Ո Վ Ի Ա Ն

Առանց քալելոյ  
Ընթացաւ ի ծով,  
Եւ չունէր նաւակ.

Անսղող ի չըսոյ  
Թաղեցաւ ընդ ջրով  
Ի ծովուն յատակ.

Զուրկ էր նա յօդոյ,  
Մեռեալ ոչ գոլով,  
Եւ շնչէր յստակ.

Ո՞վ իցէ այս մարդ,  
Ասա դու ինձ արդ  
Եւ առասպելիս  
Իմ գիտակ լինիս:

Ի Ե. Յ Ո Վ Ա Կ Փ Գ Ե Ղ Ե Ց Ի Կ

*Յայշալի*

1. Եւրայիլ սիրէր զՅովսէփ առաւել քան զամենալին  
որդիսն իւր. և արար նմա պատմուճան ծաղկեալ: Իբրև տե-  
սին եղբարքն նորա թէ սիրէ զնա հալըն քան զամենալին  
որդիս իւր, ատեցին զնա. և ոչ կարէին խօսել ինչ ընդ նմա  
խաղաղութեամբ: Եւ ետես երազ Յովսէփ. և պատմեաց Եղ-  
բարք իւրոց: և ասէ ցնոսա. «Լուարուք զերազն զոր տեսի.  
թուէր եթէ որալ կապէաք ի դաշտի միում. և կանգնեցաւ  
որայն իմ, եկաց ուղղորդ. և դարձան որալըն ձեր և պա-  
գին երկիր իմում որալոյն:

2 Եւ ասեն ցնա եղբարքն իւր. «միթէ թագաւորելով  
թագաւորեսցես ի վերալ մեր, կամ տիրելով տիրեսցես զմեզ:  
Եւ յաւելին ևս ատել զնա վասն երազոցն նորա և վասն  
բանիցն նորա:» Եւ ետես միւս ևս երազ. և պատմեաց հօր  
իւրում և եղբարց իւրոց: և ասէ. «ահա տեսանէի միւս ևս  
այլ երազ, որպէս թէ արեգակն և լուսին և մետասան աս-  
տեղք երկիրպագանէին ինձ:» Սաստեաց նմա հալըն իւր և  
ասէ. «զինչ է երազն զոր տեսեր. արդ գալով գայցեմք ես  
և մալը քո և եղբարք քո և երկիրպագանիցեմք քեզ:» Եւ  
նախանձեցան ընդ նմա եղբարքն իւր, բայց հալըն պահէր  
զբանսն:

3. Եւ գնացին եղբարք նորա արածել զիսաշինս հօրն  
իւրեւ. յ: Եւ ասէ <sup>Յայշալի</sup> Յովսէփ. «ոչ աւասիկ եղբարք  
քո արածեն զիսաշինսն. եկ առաքեցից զքեզ առ նոսա. Երթ,  
տես եթէ ողջ իցեն եղբարքն քո և խաշինք. և բեր ինձ  
զրոյց:» Եւ առաքեաց զնա. տեսին զնա եղբարքն յառաջա-  
գոյն ի հեռաստանէ. և ասեն իւրաքանչիւր ցեղբարք-իւր.  
«ահա երազատեսն զայ. եկալք սալանցուք զնա և բնկեսցուք

ի մի ի գբոց աստի. և ասասցնեք եթէ գազան չար եկեր զնա. և տեսցնեք զի՞նչ լինիցին երազքն նորա»:

4. Եւ եղեւ իբրև եկն Յովսէփ առ եղբարսն իւր, մերկացին զպատմուճանն նորա ծաղկեալ ի նմանէ և առին ընկեցին զնա ի գուբ մի. և նստան ուտել զհացն: Զաշս ի վեր բարձեալ տեսին, և ահա ճանապարհորդք գային. և ասէ Յուդա յեղբարսն իւր. «զի՞նչ օգուտ է, եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր, և թագուցանիցեմք զարիւն նորա. եկայք վաճառեսցուք զնա. և ձգեցին հանին զՅովսէփ ի գբոյ անտի և վաճառեցին զՅովսէփ քսան դահեկանի. և իջուցին զՅովսէփ լԵզիպտոս:

5. Եւ առեալ զպատմուճանն Յովսէփայ՝ զենին ուլ ալծեաց և թաթաւեցին զպատմուճանն յարեան. և առաքեցին զպատմուճանն ծաղկեալ տանել առ հայրն իւրեանց և ասեն. «զալդ գտաք. ծանիր ելմէ որդւոյ քո իցէ պատմուճանդ»: Եւ ծանեաւ զնա և ասէ. «պատմուճանս որդւոյ իմոյ է. զագան չար եկեր զնա. զագան յափշտակեաց զՅովսէփ»: Եւ պատառեաց զհանգերծս իւր և քուրձ զգեցաւ ի վերայ միջոյ իւրոյ. և սուգ առնէր ի վերայ որդւոյն իւրոյ աւուրս ըազումս:

## Ի Զ. Ս Ե Ր Մ Ա Ն Ս Հ Ա Ն

Ա.Հաւասիկ ել սերմանող սերմանել. եղեւ ի սերմանելն ոմն անկաւ առ ճանապարհաւ. եկն թուչուն և եկեր զնա: Եւ այլն անկաւ յապատաժի, ուր ոչ գոյր հող բազում. և վաղվաղակի բուսաւ. քանզի ոչ գոյր հիւթ երկրին. և յորժամ ծագեաց արև. ջեռաւ. և զի ոչ գոյին արմատք, յամաքեցաւ. Եւ այլն անկաւ ի մէջ փշոց. ելին փուշքն և հեղձուցին զնա. և պտուղ ոչ ետ: Եւ այլն անկաւ յերկիր բարւոք. և ելեալ աճեցեալ տալր պտուղ. և բերէր ընդ միոյ երեսուն և ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր:

## Ի Է. Ո Ւ Ն Ա Յ Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

Ծաղկի գարուն քաղցր ի կանաչ. Սահին առուակք քաղցրակարկաչ. Երգէ սոխակ զիւրն աւաչ. Յայտնել զսէր իւր և զհառաչ:

Փըթթին և վարդք ալգուն վաղքաջ, Զորով արև տալ զիւր պաղպաջ. Բայց մինչև երբ գնան յառաջ. Թօշնի և վարդ, թօշնի կանաչ:

Ա.մենալն ինչ ունի աւարտ, Փամանակաւ գնայ յաղարտ, Եւ քոյդ, անձն իմ, իղձ տարապարտ, Ընդ նոյն սկեալ և քոյին քարտ:

## Ի Բ. Ա Ն Կ Ո Ւ Մ Ն Ե Ր Ո Ւ Ս Ա Ղ է Մ Ի

Զինըդ զատաւ, նստաւ մենացեալ քաղաքն բազմաժողով. և եղեւ իբրև ալրի լցեալ տրտմութեամբ: Իշխան աշխարհին եղեւ հարկատու: Սուգ առին ճանապարհք Ակօնի. ամենալն դրունք նորա եղեն յապականութիւն. և քահանայք նորա հաշին և հառաչեն և յոգւոց ելանեն. կուսանք նորա ի գերութիւն վարեցան: Եւ եղեն գերիչք նորա ի գլուխ և թշնամիք նորա յուրախութիւն: Տղալք նոցա վարեցան ի գերութիւն. թխացան քան զածուխ տեսիլք իւրեանց և ոչ ոք ճանաչէր զնոսա. մածեալ էր մորթ յոսկերս նոցա. բըրտացան նոքա և եղեն իբրև զփայտ չորացեալ. կցեցան լեզուք գիացիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւոյ իւրեանց. տղալք զհաց խնդրէին և ոչ ոք էր, որ բերէր նոցա:

## Ի Թ. Բ Ա Ր Կ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Բարկութիւն զարիւնն եռացուցանէ, զմարմինն դողացուցանէ, զաշսն այլագունէ, զգոյնն շրջէ. և ամենսկիմբ

զմարդն վայրենի ցուցանէ և տայ աղաղակել բազում մորոսախօսութեամբ: Ոչ գեղք մահաբերք և ոչ հարուածք կարձի նման են հարուածոց բարկութեան: ոչ հատումն սրոյ և ոչ ալրեցուած հրոյ կսկծեցուցանեն առաւել քան զբարկացողացն: Յորժամ միանգամ զխորհուրդս մարդու ըմբռնէ անօրէն ախտն բարկութեան, լափշտակէ զմիտսն ի նմանէ և գագանացուցանէ: Ոչ ամօթ եղբարցն, ոչ խրատ վարդապետաց, ոչ հրամանք պատուիրանաց զնա ոչ պատկառեցուցանեն ի զեղջ և լապաշաւ:

### I. ԴԱՆԻԵԼ ՄԱՐԳԱՐԻ

1. Բաղդասար արքայ արար ընթրիս մեծամեծաց իւրոց. իբրև լնդ գինիս եմուտ, հրամայեաց բերել զսպասս արծաթոյ և զոսկեոյ, զոր եհան նաբուգոզոնոսոր հայր նորա ի տաճարէն, որ լնրուսաղէմ, զի արբցին նոքօք թագաւորն և մեծամեծք իւր: Ըմպէին նոքօք զգինի և օրհնէին զաստուած զոսկեղէնս և զպղնձիս և զերկաթիս և
2. զփայտեղէնս և զքարեղէնս: Ի նմին ժամու ելին մատունք ձեռին մարդոյ և զրէին հանդէպ գնդին ի վերայ բռելոյ որմոյ տաճարի թագաւորին: Եւ թագաւորն տեսանէր զթաթ ձեռինն, որ զրէլ: Յայնժամ հատան գոյնք թագաւորին և խորհուրդք նորա խոռվէին զնա և յօքք միջոյ նորա լուծանէին և ծունկք նորա զմիմեանս բա-
3. բախէին: Եւ աղաղակեաց թագաւորն զօրութեամբ՝ ածել զմոգս և զքաղեալս և զգէտս: Եւ ասէ ցիմաստունսն բարելացոց. Որ ընթերցցի զգիրդ զայդ և զմեկնութիւն դորա ցուցցէ ինձ, ծիրանիս զգեցցի և մանեակ ոսկի ի պարանոցի քում և երրորդի
4. ըեցէ: Եւ մտանէին ամենալն իմաստունք թագաւորին և ոչ կարէին զգիրն ընթեռնուլ և ոչ զմեկնութիւն նորա ցուցանել թագաւորին: Եւ արքայ Բաղդասար խոռվեցաւ և գոյն երեսաց նորա շրջեցաւ. խոռվեցան և մեծամեծք
5. նորա ընդ նմաւ: Եւ եմուտ տիկինն ի տաճար ուրախութեանն և տսէ. Արքայ, լաւիտեան կեաց. մի խոռվեցոււ-

6. զբեզ խորհուրդք քո և գոյն երեսաց քոց մի եղծցի: Զի է ալր մի ի թագաւորութեան քում. և արքայ նաբուգոդոնոսոր հայր քո Եշանն կացոյց զնա ի վերայ զիտաց և մոգուց և քաղեալց և ըզձից: Մեկնէ երազս և պատմէ զառակս և լուծանէ զիրս կապեալս — Դանիէլ: Եւ արքայ Բաղդասար անուն եղ նմա. Արդ կոչեսցի և
7. զմեկնութիւն դորա պատմեցէ: Յայնժամ ածին ի ներքս զԴանիէլ տուաջի թագաւորին: Եւ ասէ թագաւորն ցԴանիէլ. «լուայ զքէն թէ հոգի Աստուծոյ է ի քեզ. և արդ աւասիկ մտին առաջի իմ իմաստունք և մոգք և իղձք, զի զգիրդ զայդ ընթեռնուցուն և զմեկնութիւն դորա ցուցցն ինձ. և ոչ կարացին պատմել ինձ. և ես լուայ զքէն թէ կարող ես մեկնել զմեկնութիւնս. և արդ եթէ կարիցես զգիրդ ընթեռնուլ և զմեկնութիւն դորա ցուցանել ինձ, ծիրանիս զգեցցիս և մանեակ ոսկի ի պարանոցի քում և երրորդի
8. թագաւորութեան իմում տիրեցես»: Եւ ասէ Դանիէլ առաջի թագաւորին. Պարզեք քո քեզ լիցին և զպատիւտան քում ալլում տուր: բայց զգիրդ ես ընթերցալց և զմեկնութիւն դորա ցուցից քեզ: Արքայ, Աստուծ Բարձրեալ զմեծութիւն և զթագաւորութիւն և զպատիւտ և զփառս ետ նաբուգոդոնոսորայ հօր քում. ամենալն ազգք և ազինք և լեզուք զարհուրեալք դողային լերեսաց նորա. զորս կամէր, հարկանէր. զորս կամէր, սպանանէր. և զորս կամէր ինքն, բարձրացուցանէր. և զորս կամէր ինքն,
9. խոնարհեցուցանէր: Եւ յորժամ բաքերացաւ սիրտ նորա, անկաւ յաթոռոյ թագաւորութեան իւրոյ. և պատիւն բարձաւ ի նմանէ, մինչև ծանեաւ թէ տիրէ Բարձրեալն թագաւորութեան մարդկան: Եւ արդ դու որդի նորա Բաղդասար ընդդէմ Աստուծոյ երկնից հպարտացար. և զպասս տան նորա բերին առաջի քո. և գու. և մեծամեծք քո ըմպէիք նոքօք զգինի. և զաստուածս, որք ոչ տեսանեն և ոչ լսեն և ոչ իմանան, օրհնէիք: Ակասն այնորիկ տուաքեցաւ թաթ ձեռինն և զգիրդ զայդ զրեաց: Եւ այս ինչ է գիրդ որ գրեալ է. Մանէ, Թէկեղ, Փարէս:

Եւ այս է մեկնութիւն բանիդ. մանէ՝ չափեաց Ա.ստուած զթագաւորութիւն քո. թէկեղ՝ կշոեցաւ ի կշուս և գտաւ պակասեալ. փարէս՝ բաժանեցաւ թագաւորութիւն քո և տուաւ Մարաց և Պարսից:

Լ.Ա. Գ.Ա.Ր.ՈՒ.Ի.Ն

Սիրեցեալդ իմ, էանց հիւսիս,  
Զի՞ ևս յամեմք աստ ի սարիս,  
Բանան ահա, տես, դրունք գարնան,  
Բարիք ամէն ընդ նոյն դառնան:  
  
Ո՞չ տեսանես զդաշտ դալար.  
Զի՞ ոչ թողուս զտաղաւար.  
Արտաքս ահա ոստնու մշակ,  
Յողոյն ծիծուան գարնան գուշակ:

Զարգելական հօտ իւր հովիւ  
Տայ մակաղել առ հեշտ առուիւ.  
Հնչեն անձաւք, անտառք, լերինք  
Եւ արձագանգք քաղցը ի սրինգ:  
  
Քաջն արտավար կազմէ զխոփ,  
Առ հիւսիս շունչ ոչ սրտատրոփ,  
Զկորդացեալ փշրէ զբունչ,  
Հարթեալ ի ցան և յառատ հունձ:

Հնչեն մայրիք հովանախիտ  
Ի խոխոջմանց ականակիտ.  
Զարդարին թուփք, ծառք ի սաղարթ,  
Եւ ազգք հաւուց ճճուեն զուարթ:

Լ.Բ. ԵՐԿԻՐ Ի ՓՈՔՈՒՆՑ

Զբոյն մըջեան արջ փորէր. և լեզուաւ ժողովէր և ուտէր. և հնարի մըջիւն սատակել զնա. երթեալ առ պիծակ և գոռեխ և մժեղ և շանաձանձ և բրէտ և առ նմանք սո-

ցին և աղաչէ օգնել իբր ազգայինք. ցաւակցեն. հարկանեն զաշս և զլսելիս արջուն. և հարկանէ գլուխ զքարի. և նեխի. և որդունք ևս ծնանին. և. ի սաստկութենէ ցաւոց՝ զբերան բացեալ գոչէր. և նոցա մտեալ յորովայնն՝ խոցոտեն զաղիսն. և նեղեալ գիմէ ի հոսանս ջըու. և անչափ ի ներքս մտեալ հեղձանի:

Լ.Գ. Ա.Մ.Ա.Ռ.Ն

Հովանաւոր ընդ ծառով:  
Շուրջ պարսւրեալ ի յոստոց,  
Հանգչիմ, ուր սիւք շնչէ զով  
Տերևակոյտ ի բազմոց:

Սաղարթագեղ մայրեաց ծայրք  
Տատանին մեղմ ի զեփիւռ:  
Եւ ծածանին դաշտավայրք,  
Ի շէկ ցորեան համասփիւռ:

Լ.Դ. Բ.ՈՒ.Ի.Ե.Ի.Ա.Ր.Ծ.Ի.Ի

Բու հրեշտակ առաքեաց առ արծիւ. և խնդրեաց զդուստըր նորա հարսն. ասելով. «Դու տունջեան քաջամարտիկ ես և ես գիշերոյ. պատշաճիմք ի խնամութիւն»: Եւ լետ բազում թախանձանաց յանձն առ տալ: Եւ ի լինել հարսանեացն ի տուէ լոլս ոչ կարէր տեսանել փեսայն. և ծաղը առնէին բազմեալքն. և իբրև եղեւ գիշեր և ոչ հարսն ետես լոյս, յաճախեաց և անդ այլանումն, և վասն ալսորիկ փութով լուծաւ հարսանիքն:

Զմիտս իւր առակս նմանեցուցանէ այնոցիկ, որ զգստերս իւրեանց յամուսնութիւն տան ալլասեռից. ուստի և ոչ է միաբանութիւն:

Լ.Ե. Ո.Ի.Խ.Տ.Յ.Ե.Փ.Թ.Ա.Յ.Ե.Ա.Յ

1. Եւ ուխտեաց Յեփթայէ ուխտս Տեառն և ասէ. Եթէ

մատնելով մատնեսցէ զորդիս Ա.մոնայ ի ձեռս իմ և եղիցի,  
որ ելանելով ելանիցէ ի գրանց տան իմոլ ընդառաջ իմ է  
դառնալն իմում խաղաղութեամբ յորդւոցն Ա.մոնայ, եղիցի,  
զի մատուցից զնա Տեառն յողակէզ: Եւ անց Յեփթալէ առ  
որդիսն Ա.մոնայ պատերազմել ընդ նոսա. և մատնեաց զնո-  
սա Տէր ի ձեռս նորա. և եհար զնոսա հարուածս մեծամե-  
ծըս յոյժ. և վանեցան որդիքն Ա.մոնալ յերեսաց որդւոցն Իս-  
րալէլի:

2. Եւ եկն Յեփթալէ ի տուն իւր. և ահա դուստր իւր  
ելանէր ընդ առաջ նորա թմբկօք և պարուք. և նա էր միա-  
մօր սիրելի նորա. և ոչ գոյր նորա բաց ի նմանէ ուստր  
կամ դուստր: Եւ եղեւ իբրև ետես զնա, պատառեաց զհան-  
դերձս իւր և ասէ. Վայ է ինձ, դուստր իմ, ընկճեցեր զիս.  
Խոչընդակն եղեր ինձ, զի ես բացի զբերան իմ վասն քո առ  
Տէր և ոչ կարացից դարձուցանել: Եւ ասէ ցնա. Եթէ վասն  
իմ բացեր զբերան քո առ Տէր, արա զիս, որպէս ել ի բե-  
րանոյ քումմէ. փոխանակ զի արար քեզ Տէր վրէժխնդրու-  
թիւն ի թշնամեաց քոյ:

3. Եւ ասէ ցհայր իւր. Արա ինձ զքանս զայս. թողա-  
ցն ինձ զերկուս ամիսս և երթալց շրջեցայց ընդ լերինս և  
լացից զկուսութիւն իմ — ես և ընկերք իմ: Եւ ասէ ցնա.  
Երթ. և արձակեաց զնա զերկուս ամիսս. և չոգաւ ինքն և  
ընկերք իւր և ելաց զկուսութիւն իւր ի զերայ լերանց: Եւ  
եղեւ յետ կատարելոյ երկուց ամսոցն՝ դարձաւ առ հայր իւր.  
և արար նովաւ զուխտն, զոր ուխտեաց:

ԼԶ. Ի Մ Ա Հ Ս Ո Ւ Ա Կ Ի Ն

Ա.'չք գեղեցիկ ցօղագին  
Լացէք զմահ սոխակին.  
Նողշողուն աչք աստեղաց,  
Զսոխակին առէք լաց:

Եիշաւ աշացս իմ արև,  
Կեանքն ապաշաւ ինձ եղեւ.

Արդ ես զլալ հարկանեմ,  
Զայլ ջայլեմանց սուգ նսեմ:  
Ա.'չք գեղեցիկ ցօղագին  
Լացէք զմահ սոխակին.  
Ա.'չք լուսալիր աստեղաց.  
Զսոխակին հարէք լաց:

ԼՀ. Ի Մ Ա Ս Ո Ւ Ի Ն Կ Ո Ւ Ս Ա Ն Ք

1. Նմանեսցի արքայութիւն երկնից տասն կուսանաց,  
որոց առեալ զլապտերս իւրեանց՝ ելին ընդառաջ փեսալին  
և հարսին: Հինգն ի նոցանէ յիմարք էին և հինգն իմաս-  
տունք: Յիմարքն առին զլապտերսն և ձէթ ընդ իւրեանս  
ոչ բարձին: Խսկ իմաստունքն առին ձէթ ամանովք ընդ լապ-  
տերս իւրեանց: Եւ ի յամել փեսալին, նիրհեցին ամենեքեան  
և ի քուն մտին:

2. Եւ ի մէջ գիշերի եղեւ բարբառ. Ահա փեսայ գալ,  
արիք ընդ առաջ նորա: Յայնժամ յարեան ամենայն կու-  
սանքն և կազմեցին զլապտերս իւրեանց: Ասեն յիմարքն  
ցիմաստուննն. Տուք մեզ յիւզոյդ ձերմէ, զի ահա շիջանին  
լապտերքս մեր: Պատասխանի ետուն իմաստունքն և ասեն.  
Գուցէ ոչ իցէ մեզ և ձեզ բաւական, այլ երթալը ի վաճա-  
ռականս և գնեսջիք ձեզ:

3. Իբրև նոքա գնացին գնել, եկն փեսայն և պատ-  
րաստքն մտին ընդ նմա ի հարսանիսն. և փակեցաւ դուռնն:  
Յետոյ գան և այլ կուսանքն և ասեն. Տէր Տէր, բաց մեզ.  
Նա պատասխանի ետ և ասէ. Ամէն ասեմ ձեզ, թէ ոչ գի-  
տեմ զձեզ:

ԼՀ. Ե Ղ Ա Ն Ա Կ Ք

Նաժիշտք արփւոյն չօրեքին,  
Որ իշխեցողք են տարւոյն.  
Մին որ ի ձեմ իւր սոխն  
ՊՃնէ զարօտ երփն ի գոյն,



Երկրորդն ի շող բացակէզ,  
Միւսն ողկուզովք սիգաճեմ.  
Չորրորդն ի ձեանց բազմեալ դէզ  
Տային միմեանց վէճ ընդդէմ:

Նորափետուր մին ինե,  
Ա.սէր, երկիր զարդարի,  
Միւսն այն թէ զհասկ ոսկեձեւ  
Ես ներկանեմ ի վայրի.  
Նախանձընդդէմ երկոցուն  
Անդուստ և միւսն պանծալր  
Գոլ լուսատու ձիթենւոյն  
Եւ զուարժարար որթոյն մալր:  
  
Չորրորդն յայնժամ դաշն և հեզ  
Զայնեալ առ քորս իւր, ասէր.  
Թ'զ արմատիք կացցեն ձեզ  
Ծաղկունք և կութք այգեբեր.  
Ալ Տէրն ի գալ իւր յաշխարհ  
Առ ի ծնանել տղայաբար  
Նախամեծար զարհամարհ  
Սառնամանիսն իմ արար:

ԼԹ. ԲԱՆՔ ՆԱԽՆԻ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ.

Ինչս պարտէ ստանալ վասն բարեկամաց. և ոչ բարեկամ վասն ընչից: Յանզգամաց մի ստանար բարեկամ, զի մի և դու անզգամ կոչեսցիս: Ոչ կարես բարեկամ ճշմարիտ ստանալ, մինչեւ զչարն ոչ հալածեսցես: Որք եղբարս ունին և սիրելիս խնդրեն, նման են, որք զիւրեանց անդաստանն թողեալ զօտարին գործեն: Յաճախեալ խորհել նախ քան զառնելն: Թէ ընդ իշխանութեամբ լինել ոչ ուսար, իշխան լինել մի համարձակիր: Զհոգի մահ ոչ կորուսանէ, այլ անմաքուր կեանք: Ոչ է պարտ ընտրել, որ ի մեծամեծ քաղաքաց իցեն, այլ՝ որ մեծք ի քաղաքաց ելանիցեն: Զոր

Հանզերձեալ իցես առնել՝ մի ասիցես, գուցէ ի չկարելն՝ ծաղը լինիցիս: Լաւ է լոել քան ունայն ինչ խօսել: Նիթ մի իմաստից լաւ է ինձ և ոչ ծովակս բաղդից: Ի վերալ շումոգաց որպէս ի վերալ գերեզմանաց անուն մարդոյ միայն գրեալ է: Այնպէս լեր առ ծնողս քո, որպէս կամիս լինել առ քեզ զորդիս քո: Որպիսի հաս մատուցանես ծնողացն քոց, զնոյն ի ծերութեան քում ընկալից լորդւոց քոց: Հնդորդիս մի ծիծաղեսցիս, զի մի լետով լացցես զնոսա:

Խ. ԽԱԶԵԼՈՒԹԻՒՆ ՏԵՍՄԻՆ

1. Եւ ետուն նմա ըմպել գինի ընդ լեզի խառնեալ: Եւ իբրև ճաշակեաց, ոչ կամէր ըմպել: Եւ հանեալ զնա ի խաչ, բաժանեցին զհանդերձս նորա վիճակաւ. զի լցոց բանն, որ ասացաւ ի մարգարէէն. Բաժանեցին զհանդերձս իմ լիւրեանս և ի վերալ պատմուճանի իմոյ վիճակս արկանէին և նստեալ պահէին զնա: Եւ եղին ի վերալ գլխոյ նորա գրեալ զվնաս նորա, թէ ալս է Յիսուս թագաւոր
2. Հըէից: Յայնժամ հանին ընդ նմա ի խաչ երկուս աւազակս, մի յաջմէ և մի յահեկէ: Եւ որ անցանէինն, հալհոյէին զնա, շարժէին զգլուխս իւրեանց և տսէին. Վահ որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր զնա, ապրեցն զքեզ, եթէ որդի ես Աստուծոյ, էջ ի խաչէդ: Նորնպէս և քահանուապետքն ձաղէին հանդերձ գլրօքն և ասէին. Զայլս ապրեցուց, զինքն ոչ կարէ ապրեցուցանել. Եթէ թագաւոր է Խորայէլի, իջցէ ալժմ ի խաչէդ և հաւատացուք դմա: Եթէ լուսացաւ լԱստուծած, փրկեսցէ ալժմ զդա, եթէ կամի զդա, քանզի ասաց, եթէ Աստուծոյ որ-
3. դի եմ: Զնոյն և աւազակքն, որ խաչեալ էին ընդ նմա, նախատէին զնա: Եւ ի վեց ժամէ աւուրս խաւար եզեւ ի վերալ ամենայն երկրի մինչեւ ցինն ժամն: Եւ զինն ժամաւն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ և ասէ. Էլի Էլի լամա սաբաքթանի. այսինքն է Աստուծած իմ, Աստուծած իմ, ընդէր թողեր զիս: Ոմանք յայնցանէ, որ անդէն կա-

լին, իբրև լուան, ասէին. յԵղիա կարգա դա: Եւ վաղվազակի ընթացաւ մի ոմն ի նոցանէ, առ սպունգ լի քացախով, հարեալ յեղեգան՝ ետ ըմպել նմա: Եւ կէսքն  
4. ասէին. թող տեսցուք, եթէ գալ Եղիա փրկել զդա: Եւ Յիսուս դարձեալ աղաղակեաց ի ձայն մեծ և արձակեաց զհսդին: Եւ ահա վարագոյր տաճարին ցելաւ յերկուս՝ ի վերուստ մինչև ի վայր. և երկիր շարժեցաւ. և վէմք պատառեցան. և գերեզմանք բացան. և բազում մարմինք ննջեցելոց սրբոց յարեան. և ելեալ ի գերեզմանաց յետ յարութեան նորա մտին ի քաղաքն սուրբ և երեցան բազմաց: Իսկ հարիւրապետն և որ ընդ նմա պահէին զՅիսուս, իբրև տեսին զշարժումնն և զեղեալսն, երկեան յոլժ և տսեն. Արգարև Աստուծոյ որդի էր սա:

ԽԱ. Ի ԽՍ.ԶԵԼՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒ.

Ծարաւեցաւ Տէրն ի խաչին որպէս զմարդ,  
Այն, որ արար զՈվկիանոս ծով գեղեցիկ.  
Սամարացւոյն ջուր խնդրելով աղբւրն Տէրն,  
Այն, որ արբոյց տիեզերաց զանմահութիւն:

Լեզի խառնեալ ընդ քացախոյ զինաւորին  
Արբուցանէր այն Երկնաւոր Թագաւորին.  
Արեգակն խաւար դարձաւ միջորէին,  
Նսեմացաւ ընդ անարդանս Անմահ Բանին:

Բարձրագոյ ձայնիւ գոչէր Տէրն ի խաչին  
Զէլիէլին, և աւանդէր առ Հայր զհոգին.  
Եւ վարագոյր հին օրինին սուրբ տաճարին  
Ընդ չարչարանս Կենարարին պատառէին:

Երկիր հիմամբ ի յանդնդոց սասանէին,  
Վէմք պատառեալ և գերեզմանըք բանալին.  
Դժոխք սարսեալ սասանեցաւ՝ բանտն ահագին,  
Եւ արձակեաց զկապեալ հոգիսն, որ անդ էին:

ԽԲ. ՄԱՏՆՈՒԹԻՒՆ ՏԵՍՈՒ

1. Եւ ելեալ գնաց ըստ սովորութեան ի լեառն Զիթենեազ. գնացին զհետ նորա և աշակերտքն: Իբրև եհաս ի տեղին՝ ասէ ցնոսա. «Յաղօթս կացէք չմտանել ի փորձութիւն»: Եւ ինքն մեկնեցաւ ի նոցանէ իբրև քարընկէց մի. եդ ծունը, կայր յաղօթս և ասէր. «Հայր, եթէ կամիս, անցող զբաժակս զայս լինէն. բայց ոչ իմ կամք, այլ քոյդ լիցին»:
2. Եւ երեւեցաւ նմտ հրեշտակ յերկնից և զօրացուցանէր զնա. և էր ի տագնապի. և մտագրութեամբ ևս կայր յաղօթս: Եւ հոսէին ի նմանէ քրտունք իբրև զկալակս արեան ոլոռն հեղեալ յերկիր: Եւ յարուցեալ յաղօթիցն՝ եկն առաջակերտսն և եգիտ զնոսա ի քուն ի տըրտ-
3. մութենէն: Եւ ասէ ցնոսա. «զ՞ ննջէք, արիք, կացէք յաղօթս, զի մի մտանիցէք ի փորձութիւն»: Եւ մինչդեռ խօսէր, ահաւասիկ ամբոխ և որ կոչէրն Յուդա՝ մի յերկուտասանիցն՝ առաջնորդէր նոցա: Եւ իբրև մերձեցաւ առ Յիսուս՝ համբուրեաց զնա. քանզի զայն նշան տուեալ էր նոցա, թէ ընդ որում ես համբուրեցից նա է, զնա
4. ունիցիք: Ասէ ցնա Յիսուս. «Յուդա, համբուրելով մատնես զորդի մարդոյ»: Իբրև տեսին, որ զնովաւն էին, որ ինչ եղեն, ասեն ցնա. «Տէր, հարցուք զնոսա սրով»: Եւ եհար մի ոմն ի նոցանէ զքահանայապետին ծառայ և ի բաց եհան զաջոյ ունկն նորա: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. «Թոյլ տուրք մինչեւ ցայդ վայր»: Եւ մատուցեալ յունկնն բժշկեաց զնա: Եւ ասէ ցեկեալսն ի վերայ նորա՝ ցքահանայապետսն և ցիշխանսն տաճարին և ցծերսն. «իբրև ի վերայ աւազակի ելիք սուսերօք և բրօք. հանապազ ընդ ձեզ էի ի տաճարին և ոչ ձգեցէք ձեռս լիս. այլ այս է ձեր ժամ և իշխանութիւն խաւարի»: Եւ կալեալ զնա ածին և մուծին ի տուն քահանայապետին:

ԵԳ. ԱՆԱՐԳԱՆՔ ՏԵԱՌԻ

Ո՞վ կամաւ զանկապելին  
Կապեալ զձեռս արձակողին,  
Ի յապարանսն տանէին  
Կայիափալ և Աննալին.

Ծառալն գերեսն այն ապտակէր,  
Յորմէ սրովըէն թեասքօղէր,  
Թուք արձակեալ պիղծ բերանով  
Յայն, որ կուրին լոյս ծագեաց թքով:

ԵԴ. ԶԱՅՆ ԱՌ ՄԵՂԱՒՈՐԻ

ԶԲՆՀ գործես, ով թշուառական.  
Ընդէր ոչ փութաս թափել ի չար ամբարշտութենէդ  
Ընդէր ոչ ողորմիս ոգւոյդ կորուսելոյ.  
Ընդէր ոչ լաս և ողբաս զանօրէնութիւնս:

Ընդէր հուր ի հուր յաւելուս ալրել դառնապէս.  
Ընդէր ի վերոյ կայծականց և փշոց գնաս հանապազ.  
Հիմ քարավէժ և դարահոս լինիս ի վախից.  
Վասն էր սուր սրես և նովին վիրաւորիս:

Զի ոչ ոք է, որ հրով հուր շիջուցանէ.  
Եւ ոչ չարիւ բարւոյ հանդիպի.  
Ո՞վ է որ փուշ տնկէ և խաղող կժիցէ.  
Կամ որոմն սերմանիցէ և ցորեան հնձիցէ:

ԵԵ. Մ Ա Ռ Ա Յ Ն Զ Ա Ր

1. Նմանեցաւ տրքայութիւն երկնի առն թագաւորի, որ  
կամեցաւ համար առնել ի մէջ ծառալից իւրոց: Եւ իբրև  
սկսաւ առնուլ, մատուցաւ առ նա պարտապան մի բիւր  
քանքարոյ: Իբրև ոչ ունէր հատուցանել, հրամայեաց զնա  
վաճառել տէրն նորա և զկին նորա և զորդիս և զամե-

նալն, որ ինչ և ունիցի. և հատուցանել: Եւ անկեալ ծա-  
ռայն երկիրպագանէր նմա և ասէր. Երկալնամիտ լեր  
2. առիս և զամենալն հատուցից քեզ: Գժացեալ տէր ծա-  
ռալին այնորիկ՝ արձակեաց զնա և զփոխն եթող նմա:  
Եւ ելեալ ծառայն եգիտ զմի ի ծառալակցաց իւրոց, որ  
պարտ էր նմա հարիւր դահեկան, և կալեալ զնա խեղդէր  
և ասէր. Հաառ ինձ զոր պարտիս: Արդ անկեալ ծառա-  
ռալակցին առ ոտս նորա, աղաչէր և ասէր. Երկալնամիտ  
լեր առիս և հատուցից քեզ: Եւ նա ոչ կամէր, այլ չո-  
3. գաւ արկ զնա ի բանտ, մինչև հատուցէ զպարտան: Իբրև  
տեսին ծառալակցիցն նորա, որ ինչ եղեն, և եկեալ ցու-  
ցին տեառն իւրեանց զամենալն, որ ինչ եղեն: Յայնժամ  
կոչեաց զնա տէրն և ասէ. Ծառալ չար, զամենալն  
զպարտան թողի քեզ, վասն զի աղաչեցէր զիս. իսկ արդ  
ոչ էր պարտ և քեզ ողորմել ծառալակցին քում, որպէս  
և ես քեզ ողորմեցալ: Եւ բարկացեալ տէրն նորա, մատ-  
նեաց զնա դահճաց, մինչև հատուցէ զամենալն զպարտան:

ԵԶ. Զ Մ Ե Ռ Ն

Ի սիւգ ցրտագին  
Արդ զոփալ բնութիւն,  
Ծաղկի գլուխ լերին  
Յասրաքատակ ձիւն:

Ոչ հեշտին կարկաջ  
Ի մարմանդ դալար,  
Ոչ երդ քաղցրաւաչ  
Յոստախիտ դադար:

Ուր են թերթք վարդի  
Յաղթողք ծիրանւոյ  
Ուր ոսկեծղի  
Լիութիւն անդոյ:  
  
Ուր թփոց պարիկ  
Երգահան սոխակ

Մեզ ի պահ լոիկ  
գհնչել իւր նուագ:

Խէ. Ա. Դ. Օ Թ. Ք

1. Ո՞րպիսի դողումն և ահեղ արհաւիրք են յանցաւորացն, յորժամ առաջի դատաւորին կայցեն ամօթով մեզացն. զիարդ ալլագունին դէմք նոցա. զիարդ սոսկան և սարսափին: Եւ զի զդոզի հարկանին յահեղ դիմաց դատաւորին: գլխակորեալք և ակն ի խոնարհ լեզուակապք կան առաջի: Եւ եթէ աղաչել և մաղթել ինչ յանդըգնիցին, անհամարձակ լեզուաւ հիւանդաձայնս բարբառին. արտասուեն, աղաչեն, մաղթեն, զի ի գութ և յողորմ զդատաւորն ածիցեն: Եւ յորժամ դատաւորն առ նոսա բարբառի, ոչ իշխեն զերեսը դարձուցանել կամ խօսել ընդ ումեք, այլ միայն ի դատաւորն նային բազում պատկառանօք:

2. Իսկ որչափ ևս տուաւել կարի կարեոր է մեզ բազում պատկառանօք կալ տուաջի ահաւորի մեծի Պատաւորին, ահեղ ահիւ մտանել և կուլ յանդիման երեսացն Աստուծոյ և յորդահոս արտասուօք խնդրել զթողութիւն: Ոչ ալլուր զմիտս և ալլուր զխորհուրդսն պարտիմք առաքել. ալլուր զլսելիս և ալլուր զտեսանելիս յածեցուցանել. պարտ է մեզ աղաչել և ժուել և խնդրել ի ձեռն ազօթից: Որք միամիտ մտօք և աննենդ հաւատով ազօթեն առ Աստուծ և խնդրեն զբարին, ընդունին զինդիրս ամենալին, որպէս ընկալան հարքն մեր տուաջինք: Զէ ինչ պիտոյ յօդումն բազում բանից ազօթականին. մաքսաւորն մի բառբառ արձակեաց և ընդունելի եղեն ազօթք նորա. և Մովսէս անշշունչ բերանով իսկ աղազակէր և զծովն յատակաբար բաժանէր. ազօթք Եղիալի զերկինս փակեցին և բացին. ազօթք Պաւթի զսուր հրեշտակին դադարեցուցին. ազօթքն Յովնանու զնա ի փոլոյ կէտին հանին կենդանի. ազօթք զհիւանդս բժշկեցին, զբորոտս մաքրեցին, զկոյրս լուսաւորեցին՝ զմեղաւորս արդարացուցին:

3. Յորժամ հաւատով ազօթեն առ Աստուծ, ընդունիս մեղաց թողութիւն, ընդունիս զերկնից արքայութիւնն, ընդունիս մարմնոյ առողջութիւն, ընդունիս աւուրս բարիս և կեանս խաղաղականս: Ազօթք զաղքատս մեծացուցանեն և զտկարս զօրացուցանեն. ազօթք զհիւանդացեալսն բժշկեն, ի ծփանաց ծովու զերծուցանեն, ի յորձանաց գետոց ապրեցուցանեն, զքաղցեալս կերակրեն, զմերկս զգեցուցանեն, զմահս տարաժամս արգելուն:

Խէ. Ո Զ Խ Ա. Ր Ն Կ Ո Ր Ո Ւ Ե Ա. Լ

Աստ ուր ուռեաց ոստք խիտ առ խիտ  
Կախին զջուրբս ականակիտ,  
Բազմեալ բլոյս դու ի ստորոտ  
Երգեալ ի նուրբ քոյին ծզօտ.  
Ծանօթ ձախիդ թերես ի լուր  
Պարձցի ոչխարն առ հովիւ իւր:  
Ահա զպատկեր նորին վճիտ  
Հայիմ ի խորս ալեաց լճիդ.  
Ահա բլոյս նա բարձր ի սեպ,  
Կացեալ ի վաւր ակնարկէ ստէպ.  
Նայեաց ի վեր ուրախ լեր արդ,  
Հովիւդ քաջ, գտեր զոչխարդ:

Խթ. Մ Ա. Հ Գ Ո Ղ Ի Ա. Թ Ո Ւ

1. Եւ ժողովեցին ալլազգիքն զբանակս իւրեանց ի պատերազմ: Եւ Սաւուղ և արք Խորայէլի ժողովեցան ի հովիտսն և ճակատեցան ի պատերազմ ընդդէմ ալլազգեացն: Եւ ալլազգիքն կային ի վերայ լերինն յայնմ կողմանէ. և Խորայէլ կայը 'ի վերայ լերինն յայսմ կողմանէ. և հովիտն ի մէջ նոցա:

2. Եւ ել այր զօրաւոր ի ճակատէ ալլազգեացն Պողիաթանուն նորա, բարձրութիւն նորա ի վեց կանգուն և թղաւ. և սաղաւարտ ի գլուխ նորա. և զբահս վերտս զգեցնալս և

սոնապանք պղնձիք ի վերայ բարձից նորա, վահան պղնձի  
ի վերայ թիկանց նորա. և ըուն գեղարդան նորա իբրև  
զստորի ոստայնանկաց. և զինակիր նորա առաջի նորա երթալր:

3. Եկն եկաց, ձայն ետ ի ճակատն Խորայէլի և ասէ ցնոսա.  
ընդէր ելանէք ճակատել ի պատերազմ ընդդէմ մեր. ոչ  
ապաքէն ես այլազգի եմ և դուք երբայեցիք ծառայք Սա-  
ւուղալ. ընտրեցէք դուք ձեզ այր մի և իջցէ առիս. եթէ  
կարասցէ կոռուել ընդ իս և հարկանել զիս, եղիցուք մեք ձեզ  
ի ծառայս. ապա թէ ես յաղթեցից և հարից զնա, եղիշիք  
դուք մեզ ի ծառայս և ծառայեսչիք մեզ:

Իբրև լուաւ Սաւուղ և ամենայն Խորայէլ զբանս ալ-  
լազգեոյն, զահի հարան և երկեան յոյժ:

4. Եւ էր այր մի ի Բեթզահէմ, և անուն նորա Յես-  
սէ. և էին նորա որդիք ութ. և գնացին երեք որդիքն Յես-  
սեալ մեծագոյնք զհետ Սաւուղալ ի պատերազմ. և Թաւիթ  
էր կրտսեր. և տսէ Յեսսէ ցԹաւիթ ցորդի իւր. «առ դու  
եղբարց քոց զարդու փոխնդոյս այսորիկ և զտասն նկանակս  
զայսոսիկ և պնդեա ի բանակն և տուր եղբարց քոց. և զտասն  
մաճառակս կաթին տացես Հազարապետին. և տեսցես զող  
ջոյն եղբարց քոց. և եթէ պէտք ինչ իցեն նոցա, իմասցիս»:

5. Եւ կանխեաց Թաւիթ ընդ առաւօտն և եթող զոչ-  
խարսն ի տուարածականսն. և եկն ի տափարակն և ի զօրն.  
և եթող Թաւիթ զկարացին լինքենէ ի ձեռն վանապանին և  
ընթացաւ ի ճակատն. և եկն եհարց զողունէ եղբարցն իւրոց.  
և մինչդեռ նա խօսէր, ահա Գողիաթ խօսեցաւ ըստ նմին  
բանից. և լուաւ Թաւիթ: Եւ խօսեցաւ Թաւիթ ընդ արսն,  
որ շուրջ կային զնովաւ և տսէ. «զինչ առնիցէ արքալ առն,  
որ հարկանիցէ զալազգի զայն և բառնայցէ զնախատինս  
Խորայէլէ:

6. Եւ լու եղեն բանքն, զոր խօսեցաւ Թաւիթ. և պատ-  
մեցին առաջի Սաւուղալ. և առ զնա առ ինքն: Եւ ասէ  
Թաւիթ ցՍաւուղ. «մի անկցի սիրտ տեառն իմոյ ի վերալ  
իւր. ծառայն քո երթիցէ և մարտիցէ ընդ ալլազգեոյն ընդ  
ալմմիկ»: Եւ ասէ Սաւուղ ցԹաւիթ. «գուցէ ոչ կարիցես եր-

թալ կոռուել ընդ ալլազգեոյն. զի դու մանուկ ես և նա ալր  
պատերազմող ի մանկութենէ իւրմէ»:

7. Եւ ասէ Թաւիթ ցՍաւուղ. «արածէր ծառայ քո ըզ-  
խաշինս հօր իւրոյ, և յորժամ գայր առիւծ կամ արջ և առնոյր  
ոչխար ի հօտէ անտի, ելանէի զհետ նորա և հարկանէի զնա  
և կորզէի ի բերանոյ նորա. և եթէ յառնէր ի վերայ իմ,  
ունէի զփողից նորա և հարկանէի և սպանանէի զնա: Զառիւծ  
և զարջ սատակէր ծառայ քո և եղիցի ալլազգին իբրև զմի  
ի նոցանէ. և արդ ոչ երթալց սատակեցից զնա և բարձից  
այսօր զնախատինս լԽորայէլէ: Տէր Սստուած, որ ապրեցուց  
զիս ի ձեռաց առիւծուն և ի ձեռաց արջոյն, նոյն ապրեցուսցէ  
զիս ի ձեռաց ալլազգեոյն այնորիկ»: Եւ ասէ Սաւուղ «Երթ  
և Տէր եղիցի ընդ քեզ»:

8. Եւ զգեցոյց Սստուղ Թաւիթի զվարապանակս իւր և  
սաղաւարտ պղնձի ի գլուխ նորա, և ագոյց նմա զրահս, և  
ած Թաւիթ զսուսեր իւր ընդ մէջի վերայ վարապանակացն.  
և գթեաց ի գնաւն մէանգամ և երկիցս. և ասէ Թաւիթ ցՍա-  
ւուղ. «ոչ կարեմ երթալ սոքօք, զի չեմ հմուտ». և հանին  
զայն ինմանէ: Եւ առ զցուպն իւր ի ձեռին իւրում. և ընտ-  
րեաց իւր հինդ քարինս ողորկս ի հեղեղատէ. և եղ զնոսա  
ի հօվուական մաղախին, յոր սովոր էր զքարն ժողովել, և  
զպարսն ի ձեռին իւրում. և մերձեցաւ առ այրն ալլազգի:  
Եւ գնալը գալը ալլազգին և մերձենալը առ Թաւիթ. և այր  
վահանակիր առաջի նորա:

9. Իբրև հայեցաւ ալլազգին և ետես զԹաւիթ, արհա-  
մարհեաց զնա. զի էր պատանեակ խարտեաշ և աչօք գեղեցիկ: Եւ  
ասէ ալլազգին. «զիմրդ, շուն հմ ես: զի ցպով և քարամբք  
գաս ի վերայ իմ»: Եւ ասէ Թաւիթ. «նաև վատթար և ս ես  
քան զշուն»: Եւ ասէ Թաւիթ. «Եկ առիս և տաց զմարմին  
քո թոշնոց երկնից և գտանաց երկրի»:

10. Եւ ասէ Թաւիթ ցալլազգին. «գու գաս ի վերայ իմ  
սրով և գեղարդեամբ և ասապարաւ. և ես գամ ի վերայ քո  
անուամբ տեառն զօրութեանց և փակեսցէ զքեզ Տէր ալ-  
սօր ի ձեռս իմ և սպանից զքեզ և առից զգլուխ քո ի քէն.

և տաց զգէց քո և զդիակունս բանակի այլազգեացդ լաւուր յալսմիկ թռչնոց երկնից և գաղանաց երկրի. և ծանիցէ ամենալն երկիր թէ զոյ Աստուած ի մէջ Խարայէլի»:

11. Եւ յարեաւ ալլազգին և եկն մերձեցաւ ընդդէմ Դաւթի. և ձգեաց Դաւթի զձեռն իւր ի մաղախն և առ անտի քար մի և պարսաքարեաց և եհար զճակատ այլազգւոյն. և եմուտ սաղաւարտն ի ճակատն, և անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր: Եւ ընթացաւ Դաւթի և հարաւ ի վերայ նորա, և առ զնորին սուսեր և մերկաց զնա ի պատենից իւրոց և սպան զնա և եհատ զգլուխ նորա:

### Ծ. Դ Ա Ի Ի Թ

Փոքր ի յեղարս իմ ես էի, կրտսեր ի տան հօր իմոլ.  
Ի սոյլ սրնգի ընդ արօտ արածէի զխաշն հալըենի:  
Սրարին ձեռք իմ ինձ քնար, գործի մատունք իմ օրհնութեան:  
Օրհնեսցէ անձն իմ զծէր, որ զհրեշտակ իւր առաքեաց.  
Եւ ի հօտէ տնտի խաշանց էառ ամբարձ զիս լաթոռ.  
Իւր զզլսով իմով եհեղ, էօծ, կացոյց զիս թագաւոր:  
Ահա եղարք իմ մեծամեծք, ահա եղարք իմ զեղեցիկք.  
Ալ ոչ ընտրեաց զնոսա Տէր, ոչ համեցաւ Տէր ընդ նոսա:  
Ելի ընդ առաջ ալլազգւոյն, զդիս նորա նզովեցի.  
Հանի զուսերն ի նմանէ, հատի զգլուխ նորա նովին,  
Ի բաց յորդւոցն Խորայէլի զնախատինս բարձեալ:

### ԾԱ. Ք է Ն Ս Ա Ի Ո Ւ Ղ Ա Յ

1. Եւ խօսեցաւ Սաւուղ ընդ Յովնաթանալ որդւոյ իւրում և ընդ ամենայն ծառալս իւր սպանանել զԴաւթիթ: Եւ Յովնաթան որդի Սաւուղալ հաճեալ էր ընդ Դաւթի լոլժ. և պատմեաց Յովնաթան Դաւթի և ասէ. Հայր իմ խնդրէ սպանանել զքեզ. զդոյշ լեր վաղիւ ընդ առաւօտն. և թաքիջիր և նստիջիր ի թագստեան. և ես ելից և կացից մօտ առ հօր իմում և խօսեցայց վասն քո ընդ հօր իմում. և 2. տեսից եթէ զինչ իցէ և պատմեցից քեզ: Եւ խօսեցաւ

Յովնաթան վասն Դաւթի բանս բարիս ընդ Սաւուղալ հօր իւրում և ասէ ցնա. Մի մեղիցէ արքալ ի ծառալ իւր Դաւթի, զի ոչինչ մեղաւ նա քեզ. և գործք նորա բարութեամբ են առ քեզ լոլժ. և եդ զանձն իւր ի ձեռին իւրում և եհար զալլազգին, և արար փրկութիւն մեծ. և ամենայն Խորայէլ տեսին և ուրախ եղեն. և ընդէր մեղանչիցես յարիւն արդար սպանանել զԴաւթիթ տարապարտուց: Եւ լուաւ Սաւուղ ձայնի Յովնաթանու. և երդուաւ Սաւուղ և ասէ. Կենդանի է Տէր, եթէ մեռած. 3. նիցի: Եւ կոչեաց Յովնաթան զԴաւթիթ. և պատմեաց նմա Յովնաթան զամենայն բանս զալսոսիկ. և տարաւ Յովնաթան զԴաւթիթ առ Սաւուղ. և էր առաջի նորա իբրև յերեկն և յեռանդն: Եւ յաւել ևս լինել պատերազմ. և զօրացաւ Դաւթիթ տալ պատերազմ ընդ ալլազգիսն. և եհար ի նոցանէ հարուածս մեծամեծս լոլժ. և փախեան 4. յերեսաց նորա: Եւ եղեւ ալս չար ի Տեառնէ ի վերայ Սաւուղալ. և ինքն նստէր ի տան և զեղարդն ի ձեռին նորա. և Դաւթիթ երգէր ձեռօք իւրովք. և խնդրէր Սաւուղ հարկանել զգեղարդնն ընդ Դաւթիթ և եհար ընդ որժն. և Դաւթիթ ել զնաց և զերծաւ: Եւ եղեւ ի գիշերին յալնմիկ առաքեաց Սաւուղ հրեշտակս ի տուն Դաւթի պահել զնա. զի սպանցէ զնա լինդ առաւօտն: Եւ Դաւթի փախեաւ և ապրեցաւ:

### ԾԲ. Ա Ռ Ս Ո Ւ Ա Կ Ն

Ընդ հովանեաւ սաղարթազեղ  
Խոնջ և թափիծ ծուփք ի ճակատ (բախի)  
Նստիմ յերգոցդ ի լուր գեղզեղ  
Եւ ի հոգոց հանգչիմ ազատ:  
Ո՞հ, դու ի նուագդ յաւերժացիր,  
Նստայց ես աստ, սոխակ քաղցրիկ,  
Մինչեւ տացես ինձ քաղցր ի նիրհ  
Ննջել յերգոցդ ի դալլալիկ:

ԾԴ Ո Խ Ա. Պ Ա. Հ Ն

- Ոխապահն նստի հանապազ և խորհի պատուհաս չարեաց նախանձորդին. ըղձանալ, նիւթէ չար ընկերին. նմա խորհի և զսով. նմա խորհի և զսուր. նմա խորհի և զհէնս. նմա խորհի և զմահս և զամենայն չարս. Սքօղին երեսք նորա ի տեսչութենէ նորա. եթէ ի ճանապարհի ուրեք գիպեսցի, խնդրէ թողուլ զճ սնապարհն. եթէ յեկեղեցւոջն տեսանիցէ. չկամի և յեկեղեցին մտանել. և եթէ ի հրա-
- պարակին դիպեսցի, զզլուխն խոնարհեցուցանէ. Եւ եթէ չար ոք զնմանէ իւօւեցի, նա ի վեր հայեցեալ զարթնու և զուարթանալ. և եթէ բան ինչ բարի զնախանձորդէն լսիցէ. առտմի. և տիսրի երեսք նորա. Սիրելի է թշնամեաց նորա և թշնամի է բարեկամաց նորա. Ոխապահն չարալուշ ոչ երեք դադարէ ի սպանութենէ. նա և ի զբոսանս իւր մարդասպան է զի զոխս ընկերին ի սրտին ունի. նա և յանկողինս իւր մարդասպան է. յորժամ զոխս ընկերին լիշէ. նա և ի տան մարդասպան է. նա և յեկեղեցւոջ մարդասպան է և ի հրապարակս մարդասպան է, զի զոխս հանապազ ի սրտի իւրում կըէ: ~~×~~

ԾԴ. Ա Շ Ո Ւ Ն

Զամառն և զգորուն.

Արկեալ զառուջեաւ,

Աշուն ճոխ մրգաւ

Գայ բիւրաբեզուն.

Ճակատուն պստկ

Փայլէ շիկագոյն

Որթոց սաղարթուն

Թև քաջողկուզակ.

Եւ յամազթեզիւր

Լի գեղազուարճ

Իբրև ի կապարճ

Ցորեան ոսկեթոյր.

Նուռն թագաւոր  
Զարդ փառաց նորին,  
Եւ շնորհը ի ձեռին  
Կարմրոլակ խնձոր:

ԾԵ. ՄԱՀ ՍԱՀՈՒՂԱՅ

- Եւ եղեւ յետ մահուանն Սաւուղայ, դարձաւ Դաւիթ ի հարկանելոյ զԱմաղէկ. և նստաւ Դաւիթ տւուրս երկուս: Եւ եղեւ յետ աւուրս երկրորդի և ահա այլ եհաս ի բանակէ զօրուն Սաւուղայ. և հանդերձք իւր պատառեալք և հողք զգլիսով իւրով. և եղեւ մտանել նորա առ Դաւիթ. անկաւ և երկիր եպագ նմա. և ասէ ցնա Դաւիթ. Զինչ
- զրոյց է, պատմեա ինձ: Եւ ասէ. Փախեաւ ժողովուրդն ի պատերազմէն. և անկոն բազումք ի ժողովրդենէն և մեռան. և Սաւուղ և Ցովնաթան մեռան: Եւ ասէ Դաւիթ ցպատանին. որ պատմեաց նմա. Զիմրդ գիտես եթէ մեռաւ Սաւուղ և Ցովնաթան որդի նորա: Եւ ասէ պատանին որ պատմեաց նմա. «Գիպելով գիպեցալ ի լերինն. և ահա Սաւուղ յեցեալ կայր ի նիզակն իւր. և ահա կառք և ախոյեանք հեծելոց գումարեցան ի նա. և հայեցաւ ի թիկունս իւր և ետես զիս. և կոչեաց զիս. և ասեմ. Աւասիկ եմ. և ասէ ցիս. Ո՞վ ես դու. և ասեմ. Ամաղեկացի եմ ես. և ասէ ցիս. Արի ի վերայ իմ և սպան զիս. զի կալաւ զիս մութ անհնարին: Եւ յարեայ ի վերալ նորա և սպանի զնա. և առի զթագն ի զլսոյ նորա և զապարանջանս ի բազկէ նորա և բերի զնոսա տեառն իմում
- այսր»: ~~Եւ~~ բուռն եհար Դաւիթ զհանդերձից իւրոց և պատառեաց զնոսա. և ամենայն արք որ ընդ նմա պատառեցին զհանդերձս իւրեանց. և կոծեցան և պահեցին և լացին մինչև ցընդերեկս ի վերալ Սաւուղայ և Ցովնաթանու որդւոյ նորա և ի վերայ տանն Խորայէլի, զի հարան սրով: Եւ ասէ Դաւիթ ցպատանին, որ պատմեաց նմա. Ուստի ես դու. և ասէ. Որդի առն պանդիսի եմ ես: Եւ ասէ ցնա Դաւիթ. Եւ զիմրդ ոչ երկեար ձգել

5. զձեռն քո ապականել զօծեալն Տեառն: Եւ կոչեաց Դաւիթ զմի ի մանկտւոյն և ասէ. Մատիք և պատահեա դմա. և եհար զնա և մեռաւ. և ասէ ցնա Դաւիթ. Արիւն քո ի գլուխ քո. զի բերան քո խօսեցաւ զքէն և ասէ թէ ես սպանի զօծեալն Տեառն: Եւ ողբաց Դաւիթ զողբս ի վերալ Սաւուզալ և ի վերալ Յովնաթանու որդւոյ նորա:

ԵԶ. ՀՐԱՄԱՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Զիշխան ժողովրդեան մի հայհոյեսցես: Որ հարկանէ զհալը իւր կամ զմալը իւր, մահու մեռցի: Որ բամբասիցէ զհալը իւր կամ զմալը իւր, մահու մեռցի: Համբաւ սուտ մի ընդունիցիս: Եթէ լսելով լուիցես ձայնի իմում և արասցես զամենալն, զոր ինչ ասացի քեզ, եղէց թշնամի թշնամեաց քոց և հակառակ կացից հակառակորդաց քոց:

ԵՒ. ԶՕՐՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ

Աղեղունք հզօրաց տկարացան.

Եւ տկարք զգեցան զօրութիւն.

Լցեալք հացիւ նուազեցին.

Եւ բաղցեալք բնակեցան յերկրի:

Զի ամուլն ծնաւ եօթն.

Եւ բազմածինն նուազեցաւ.

Տէր մեռուցանէ և կեցուցանէ,

իջուցանէ ի գժոխս և հանէ:

Տէր աղքատացուցանէ և մեծացուցանէ.

Խոնարհեցուցանէ և բարձրացուցանէ.

Կանգնէ յերկրի զտնանկն.

Եւ լարուցանէ զաղքատն լաղբեաց

Նոտուցանել զնոսա ընդ զօրաւորս ժողովրդեան.

Եւ տթոռ փառաց ժառանգեցուցանէ նոցա:

Մի պարծեսցի իմաստունն լիմաստութիւն իւր.

Եւ մի պարծեսցի հզօրն ի զօրութիւն իւր.

Եւ մի պարծեսցի մեծատունն ի մեծութիւն իւր,  
Ալ ալնու պարծեսցի, որ պարծեցին,  
Իմանալ և ճանաչել զծէր  
Եւ առնել զիրաւունս և զարդարութիւն ի մէջ երկրի:

ԵՀ. ՕՐՀՆԵՑՔ ՄԱՆԿՈՒՆՔ ԶՑԷՐ

Ի հովիս զարնայնի.

Տնւք ձեռն ի ձեռն հապա մանկունք.  
Հրաւէր ի գաշտ կարդան ծաղկունք.  
Գեղեցկագոյն տարւոյ ամիս  
Ահա հասեալ է մեզ մայիս.  
Զաստուածայինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զծէր:

Տեսէք զեթերս, ահ, զի՞ պալծառ  
Ո՞չ զի՞ չքնաղ երկիր խոնարհ,  
Լուսացնցուղ օդք թափանցիկք  
Թուին բիւրեղք երկնաբացիկք.  
Զաստուածայինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զծէր:

Եկալք իջցուք ի գաշտ հովիտ  
Ճեմել ի մարզս ծաղկախիտ,  
Բլուրքս և մալրքս են գալարիք  
Գետք և առուակքս խաղաղիկ.  
Զաստուածայինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զծէր:

Անթել կապերտ կանաչորակ  
Անծալ սփոխ առ հասարակ,  
Եւ երփներանդ ալկետալ նարօտ  
Ի բիւրաբիւր ծաղկանց ծըզօտ.  
Զաստուածայինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զծէր:

Տեսէք քանի՛ բիւրք են ծաղկանց,  
Քանի՛ երանդք, ձեք գերազանց.  
Զի՞ անուշակ հոտս նըրբին  
Զոր ի հեռուստ քիմք մեր արբին.  
Զաստուածալինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զԾէր:

Հայեցարո՛ւք ի թիթեռնիկ  
Հեզաթռիչ ծաղկէ ծաղիկ,  
Որոց նման և ինքն պերճ  
Ծաղկաթևէ յայերաց մէջ.  
Զաստուածալինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զԾէր:

Լուարո՛ւք զերդ ծիծուանցդ բիւր  
Ի հարաւոյ հասեալ մեզ հիւր,  
Ի ծայր ծառոցս եղեալ բունիկ  
Ու զվտակաւս թափտոիկ  
Զաստուածալինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զԾէր:

Լսէք հեռուստ և հեզ բառաջ.  
Ահա գառինքն ի սէզ կանաչ,  
Եւ ուլք ի վազս ձեզ նման  
Խալտան ի սոյլ հովուի սրնդան.  
Զաստուածալինն աստ տեսէք սէր  
Եւ օրհնեցէք մանկունք զԾէր:



Վ Ե Բ Զ



207

առաջ զայտ բերք են ծաղկաց  
թափ երացեց. Այս գիրնաւու  
թի անուշն հռու նորրի  
Եօր ի հետաւ թիք մեր ոսքի  
Հասուածովին առ մենք այս  
Աւ պունդը մասնաւ զօն

Խաղարու ի թիթեա ովկ  
Մեսութեա խոնի հայու  
ովկ Եօր ի Եօր ուկը  
Խաղարու զորու մայ  
Խաղարու առ մենք այս  
Աւ պունդը մասնաւ զօն

Խաղարու ու ովկ մինաւու զօն  
Խաղարու զորու մայ ուկը  
Խաղարու առ մենք պասու  
Խաղարու զորու մայ  
Խաղարու առ մենք այս  
Աւ պունդը մասնաւ զօն

Ովկ Տեսաւ ի մեր զայտ  
Ան կարգեց ի մեր կայու  
Եօր ի համաց ի մենք  
Խաղարու զորու մայ  
Խաղարու առ մենք պասու  
Խաղարու զորու մայ  
Աւ պունդը մասնաւ զօն



MAL029092

— 9866.6 1 9866 —